Վերապատրաստման կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպն ուսուցանելիս

Կատարող՝ Անահիտ Հարությունյան

Դպրոց՝ «Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Աստղիկ Հայրապետյան

Գյումրի 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1 *Արժեհամակարգի էությունն ու նշանակությունը*.....4

ԳԼՈՒԽ 2 Արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի միջոցով.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

Օգտագործված գրականություն.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեքները և արժեքային համակարգը մարդու և ողջ հասարակության կյանքի և մշակույթի անբաժանելի մասն են:

Յուրաքանչյուր մարդու եթե ուղղենք հարց՝ ինչն է քեզ համար կարևոր, և որն է կյանքում գլխավորը, կպատասխանի անհատապես: Մեկը կասի, որ կյանքում ամենակարևորը կարիերան ու բարեկեցությունն է, մյուսը կպատասխանի, որ իշխանություն և կարգավիճակ է հասարակության մեջ, երրորդը որպես օրինակ կբերի ընտանիքը, մյուսը՝առողջությունը և այլն: Շարքը կարող է բավականին երկար լինել, բայց պետք է միայն հասկանալ, որ այն, ինչ կարևոր է մարդու համար, վերահսկում է նրա գործողությունները: Ելնելով իր առաջնահերթություններից՝ նա կընկերանա, կրթություն կստանա, աշխատանքի վայր կընտրի, այլ կերպ ասած՝ կկառուցի իր կյանքը:

Հետզոտության նպատակն է ուսումնասիրել արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպն ուսուցանելիս:

Հետազոտության խնդիրն է՝ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպն ուսուցանելը ինչպիսի՞ ազդեցություն կունենա արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում:

Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականությունից:

ԳԼՈՒԽ 1 *Արժեհամակարգի էությունն ու նշանակությունը*

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների անորոշ ըմբռնումը փոխում է վերաբերմունքը կյանքի, ընտանիքի և աշխատանքի նկատմամբ, հանգեցնում է սոցիալական պասիվության:

Մարդկային ցանկացած գործունեություն սկսվում է նպատակի սահմանումից, որին ուղղված կլինի գործունեությունը: Նպատակը մարդու պատկերացումն է գործունեության վերջնական արդյունքի մասին, որի ձեռքբերումը թույլ կտա անհատին բավարարել իր որոշ կարիքները[1]: Այսպիսով՝ արդեն իսկ սկզբից անհատն իր գործունեության ակնկալվող արդյունքին վերաբերվում է որպես արժեք: Ուստի մարդն իր համար նշանակալի, արժեքավոր է համարում բուն գործունեության՝ արդյունքի հասնելուն ուղղված գործընթացը: Իհարկե, ոչ բոլոր արդյունքները և ոչ բոլոր մարդկային գործունեությունը դառնում են արժեքներ, այլ միայն նրանք, որոնք սոցիալական նշանակություն ունեն՝ բավարարելով մարդկանց հանրային կարիքներն ու շահերը: Եվ սա ներառում է ոչ միայն իրերը, այլև գաղափարները, հարաբերությունները, գործունեության ձևերը: Մենք գնահատում ենք նյութական հարստությունը և մարդկային արարքների բարությունը, պետական օրենքների արդարությունը, աշխարհի գեղեցկությունը, մտքի մեծությունը, զգացմունքների լիությունը և շատ ավելին:

Ցանկացած արժեք բնութագրվում է երկու հատկությամբ՝ ֆունկցիոնալ և անձնական:

Արժեքի ֆունկցիոնալ իմաստը սոցիալական հատկությունների, օբյեկտի կամ գաղափարների գործառույթների ամբողջությունն է, որոնք վերջիններս արժեքավոր են դարձնում տվյալ հասարակության մեջ: Օրինակ, գաղափարը բնութագրվում է որոշակի տեղեկատվական բովանդակությամբ և դրա հուսալիության աստիճանով:

---

[1] Малахов В.А. Ценность как категория культуры // Философская мысль, 2002

Արժեքի անձնական իմաստը նրա հարաբերությունն է մարդու կարիքների հետ: Արժեքի անձնական իմաստը մի կողմից որոշվում է արժեքի գործառույթներ կատարող օբյեկտով, իսկ մյուս կողմից կախված է հենց անձից: Մարդը, ըմբռնելով իրի իմաստը, ցանկանում է ոչ միայն զուտ բնական կարիքից, այլ այն հասարակության կողմից, որին նա պատկանում է, այսինքն՝ ընդհանուր սոցիալական կարիքից: Նա կարծես իրին նայում է այլ մարդկանց, հասարակության աչքերով և տեսնում է, թե ինչն է կարևոր այս հասարակության մեջ իր կյանքի համար: Մարդը, որպես ընդհանուր էակ, իրերի մեջ փնտրում է նրանց ընդհանուր էությունը՝ իրի գաղափարը, որն իր համար իմաստն է: Ընդհանուր առմամբ, պայմանականորեն բոլոր արժեքները կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հոգևոր և նյութական:

Ն.Ի. Լապինը առաջարկում է արժեքների դասակարգումն ըստ հետևյալ հատկանիշների[2]՝

1
- Ըստ թեմայի՝ հոգևոր, նյութական, տնտեսական, սոցիալական, քաղաքական

2
- Ըստ անհատի կյանքում ունեցած դերի՝ վերջնական և գործիքային

3
- Ֆունկցիոնալ կողմնորոշման՝ ինտեգրում և տարբերակում, հաստատում և մերժում

4
- Մարդկանց կարիքներին համապատասխան՝ կենսական, հաղորդակցման, իմաստալից

5
- Ըստ քաղաքակրթության տեսակի՝ ավանդական, ժամանակակից համամարդկային արժեքներ

Անձի արժեքային համակարգը կախված է տարիքային զարգացման առանձնահատկություններից: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքներին: Արժեքային

[2] https://www.evkova.org/referat-na-temu-sistema-tsennostej-kak-osnova-kulturyi 15/10/22

համակարգի ձևավորման գործում պետք է հաշվի առնել սուբյեկտիվ և օբյեկտիվ տարբեր գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները:

Հայաստանում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Միջնակարգ կրթության պետական չափորոշչում[3]: Ըստ որի՝ անհրաժեշտ է ձևավորել այնպիսի աշակերտներ, ովքեր պետք է՝

- գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- հարգի Հայաստանի պետական խորհրդանիշերը, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,
- կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.
- գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,
- գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը, հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

---

[3] Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195 28/09/22

- անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

Արժեքներն ամենակարևորն են այնպիսի համակարգի պահպանման և գործունեության համար, որը ենթադրում է դրանց փոխանցումը սերնդեսերունդ հասարակության մշակույթի տարրերի կրթության և յուրացման միջոցով: Այդ գործառույթն իրականացնում են ընտանիքը, դպրոցը, կրոնը, պետական և սոցիալական այլ հաստատությունները:

Արժեքները որոշում են նպատակները և, ամենակարևորը, դրանց հասնելու ուղիներն ու միջոցները: Այս ամենը կձևավորի ողջ հասարակության մշակույթը: Ուստի մանկավարժության կարևոր պահանջներից է աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը: Անհրաժեշտ է անհատին ոչ միայն գիտելիքներով զինել, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորել:

Արժեքները քարացած չեն: Թեև որոշ հիմնական արժեքներ, ամենայն հավանականությամբ, կմնան մեզ հետ մեր ողջ կյանքի ընթացքում, մյուսները կարող են փոխվել կյանքի հանգամանքների հետ կամ երբ մեծանում ենք, երբ սկսում ենք կարևոր համարել այլ բաներ: Նույնիսկ եթե արժեքները մնան նույնը, դրանց առաջնահերթության կարգը կարող է փոխվել:

Համաձայն Վ. Աֆանասևի՝ ընտանիքում, դպրոցում անձի ձևավորման գործընթացը իրականանում է նախևառաջ «տեղեկատվական ուղիով անձին ուրիշների կողմից ստացվող համապատասխան տեղեկություն փոխանցելու միջոցով»[4]: Մշակույթի, հասարակության արժեքների յուրացումը իրականանում է հասանելի տեղեկատվական միջոցների, մարդկանց հետ շփման միջոցով: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն:

---

[4] Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ մարդու կյանքի արժեքների համակարգը կարող է բաղկացած լինել մի քանի տարրերից[5]՝



[5] Система жизненных ценностей человека: виды ценностей и формирование системы՝ https://4brain.ru/

ԳԼՈՒԽ 2 Արժեհամակարգի ձևավորումը Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի միջոցով

Այժմ անրադառնանք, թե Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպն ուսուցանելը ինչպես կնպաստի արժեհամակարգի ձևավորմանը:

Վեպը գրելու շարժառիթը Դեմիրճյանը ներկայացնում է հետևյալ կերպ՝ ««Վարդանանք» պատմավեպը ես գրեցի Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, այն արտակարգ, ժողովրդական ուժերի գերազանց լարման օրերին... Երբ վճռվում էր Հայրենիքի լինել - չլինելու ճակատագրական խնդիրը... Ես գիտակցամ էի, որ պատերազմը հայրենական է, այսինքն համաժողովրդական... Ես հիշեցի հինգերորդ դարը, հայ ժողովրդի կյանքի-մահու կռիվը պարսից բռնակալության դեմ և քանի որ ժողովուրդը դուրս էր եկել հայրենական պատերազմի' Ես կամեցա հիշեցնել նրան, որ նա հնում շատ է ունեցել հայրենիքի պաշտպանության պատերազմներ, որոնց մեջ ամենամեծը Վարդանանց պատերազմն էր: ... Հիշեցնել հայ ժողովրդին նրա հին սխրագործությունը նրանով էր օգտակար, որ նրա մեջ կամրացներ քաջալերանքը ... Հայրենական մեծ, արդարացի պատերազմի ժամանակ[6]»:

«Վարդանանք» վեպում գլխավոր կերպարը Վարդան Մամիկոնյանն է: Դերենիկ Դեմիրճյանը, ընդգծելով Վարդան Մամիկոնյանի կերպարը, բացահայտել է զորականի, քաղաքական գործչի և մարդու կենդանի խառնվածքը: Վարդան Մամիկոնյանի կերպարը հայրենասիրության վառ օրինակ է աշակերտների համար: Վարդան Մամիկոնյանը, լիովին համոզված իր գլխավորած ապստամբության իրավացիության մեջ, կռիվ է ելնում իբրև հերոս և ընկնում է հերոսի մահով և անմահության փառքով պսակում է իր անունը:

Վարդան Մամիկոնյանը սիրված էր բոլորի կողմից: Նա նաև շատ լավ քաղաքական գործիչ էր, նա հասկանում էր նամակի իրական նպատակները, գիտակցում էր դրա քաղաքական նպատակները: Հասկանում էր որ այդ ամենը ամենից առաջ հայոց աշխարհի ինքնուրույնությանը. «Մեռնենք և չտանք թշնամուն ոչինչ» – սա էր նրա նշանաբանը:

---

[6] Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Երևան, 1983թ

Պատմական խոշոր անհատը, հայ ժողովրդի դարավոր հնություն ունեցող անցյալում, սերել է, որպես կանոն որևէ իշխանական տոհմից, պատկանել է վերնախավին և դարձել նույն այդ խավի սոցիալ-քաղաքական ձգտումների արտահայտիչը[7]: Շատ բարդ ու հակասական է եղել այդպիսի հերոսների հասարական ընթացքը: Նրանք, մնալով որպես դարի ու դասակարգի հարազատ զավակը, իրենց գործունեության ճանապարհին սերտորեն առնչվել են ժողովրդի կեցության հիմնախնդիրներին: Այս հանգամանքն էլ իր յուրօրինակ անդրադարձն է գտել նրանց թե' անձնական կյանքի, և թե' հանրային գործունեության մեջ:

Հաջորդ կերպարը, որն իր տպավորիչ արտահայտումն է գտել վեպում Վասակ Սյունեցին է: Վասակը ունենում է հոգեկան տառապանքի տանջալից պահեր, սակայն դրանք բխում են նրա փառասիրական էությունից: Նա եսասեր է, քծնում է պարսիկներին, սակայն հոգու խորքում նաև ատում է նրանց: Նա ուզում է վերականգնել հայոց թագավորությունը, բայց միայն այն պայմանով, որ անպայման ինքը լինի թագավոր: Նրան մինչև հոգու խորքը խոցում և վիրավորում է, որ ժողովրդի մեջ ինքը չի վայելում Վարդան Մամիկոնյանի սերն ու հարգանքը, քանի որ նախարարների մեծ մասը հավատում էր սպարապետին: Վասակից երես են թեքում որդիները, հեռանում են հարազատները: Դեմիրճյանը քայլ առ քայլ խորացրել է փառասեր մարդու ողբերգությունը, ինչն էլ նրան մղում է դավաճանությանը: Նրա բարոյական անկմանը ուղեկցում են դավաճանություններն ու նսեմ արարքները: Վասակը չի ճանաչում ոչ ընտանիք, ոչ հայրենիք, ոչ խիղճ ու պատիվ: Վարդանը զոհում է հարազատներին և իրեն' ժողովրդին փրկելու համար, Վասակը' յուրայիններին և ժողովրդին' իր անձը փրկելու համար: Դեմիրճյանը հակադրում է «Վարդանանք» -ի գլխավոր հերոսներին' ազգային հերոսի և ազգի դավաճանի դիրքերում:

Հայ ժողովրդի մեջ որոշակի է այն միտումը, որ Վարդան Մամիկոնյանի անունը հերոսության և հայրենասիրության, իսկ Վասակ Սյունեցունը՝ դավաճանի խորհրդանիշ է:

«Վարդանանք» վեպի ուսուցանելը կնպաստի աշակերտների մոտ հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքների

[7] Հայոց Լեզու Ե վ Գրականություն, Ն. Համբարձումյան Դ . Դ եմ իրճյա նի «Վարդանանք» պատմավեպի ուսուցումը, Երևան, 2008թ

ձևավորմանը: Վեպը նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

«Վարդանանք» վեպի օգնությամբ աշակերտները պատկերացում են կազմում պատմության՝ նրա անցած ուղու մասին, նրա կենսագրությունն ու հիշողությունը, հինգերորդ դարում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն հիմք է քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Վեպի միջոցով ձևավորվում է ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Օգնում է զարգացնել սովորողների մոտ ազգային-պետական արժեքային համակարգը, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացու: Նաև վեպն օգնում է ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս մշակութային ձեռքբերումների միջև եղած բազմատեսակ կապերը, մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

Արժեհամակարգի կարևորագույն տարրն է համարվում հայրենասիրությունն, որն իր վառ արտահայտությունն է գտել այս ստեղծագործությունննում: Աշակերտները շատ կարևոր է, որ գիտակցեն թե հանուն մեր հավատքի, հանուն մեր ինքնության ինչպիսի պայքար են մղել մեր նախնիները:

Սովորողները վեպի միջոցով ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները:

Դասապրոցեսի ընթացքում արժեհամակարգի արդյունավետ ձևավորման նպատակով կարևոր է «Վարդանանք» վեպն ուսուցանելիս հաճախ կազմակերպել

ինքնուրույն և խմբային աշխատանքներ: Վեպի ուսուցման ընթացքում կիրառում եմ «Վենի դիագրամ», «Բանավեճ», «Մտագրոհ», «ԳՈՒՍ», «Քառաբաժան» մեթոդները:

Ներկայացնեմ մի քանի օրինակներ՝ աշակերտներին հանձնարարում եմ «վենի դիագրամ» մեթոդով համեմատել Վարդան Մամիկոնյանին և Վասակ Սյունեցուն: Գրատախտակի մեջտեղում գրում են Վարդան Մամիկոնյան, և աշակերտներին ասում եմ՝ կիրառեն «մտագրոհ» մեթոդը: Կազմակերպում եմ բանավեճ, և մի կողմը փորձում է արդարացնել Վասակ Սյունեցուն, իսկ մյուս կողմը հակառակը: «ԳՈՒՍ» մեթոդի կիրառման ընթացքում աշակերտները գրում են՝ ինչ «գիտեն» այս թեմայի մասին: Ապա լրացնում են գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում եմ՝ ինչ են ուզում իմանալ այս թեմայի մասին: Դասի վերջում լրացվում է «սովորեցի» սյունակը:

«Վարդանանք» վեպն ուսուցանելիս լուծվում է մի շարք կրթադաստիրակչական կարևոր խնդիրներ, մասնավորապես՝

- ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները[8],
- դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ծառայելը պատվի գործ է,
- հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին,
- զարգացնել սովորողների ճանաչողական, ստողծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները,

[8] Ա. Ղուկասյան, Հայոց պատմություն 8-9 դասարան, ուսուցչի ձեռնարկ , Երևան, 2013թ

- ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ հետազոտության արդյունքում կարող ենք ասել՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպն ուսուցանելը կնպաստի արժեհամակարգի ձևավորմանը և զարգացմանը :

Վեպը նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

«Վարդանանք» վեպն ուսուցանելիս լուծվում է մի շարք կրթադաստիրակչական կարևոր խնդիրներ, մասնավորապես՝

- ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:
- դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը,որ հայրենիքին ծառայելը պատվի գործ է,
- հասնել այն բանին,որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին,
- նպաստում է սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների զարգացմանը:

Օգտագործված գրականություն

- Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, Երևան, 1983թ
- Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունը, Հոդվածներ և հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1980թ
- Հայոց Լեզու Ե վ Գրականություն, Ն. Համբարձումյան Դ . Դ եմ իրճյա նի «Վարդանանք» պատմավեպի ուսուցումը, Երևան, 2008թ
- Малахов В.А. Ценность как категория культуры // Философская мысль, 2002
- Афанасев В. Г., Социальная информация и управление обществом. М.: Политиздат, 1975
- Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=42195 28/09/22
- https://www.evkova.org/referat-na-temu-sistema-tsennostej-kak-osnova-kulturyi 15/10/22
- Система жизненных ценностей человека: виды ценностей и формирование системы ` https://4brain.ru/